

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 205

Շնորհքի ու փրկութեան վստահութիւն – Արդեօ՞ք փրկութեան վստահութիւնը հնարաւոր է այս կեանքում: Արդեօ՞ք մի հաւատացեալ կարող է ունենալ մի իրական վստահութիւն որ նա ունի յաւիտենական փրկութիւն: Ո՞րն են իսկական վստահութեան նշանները: Ինչպէ՞ս ենք կարող զանազանել ճշմարիտ վստահութիւնը կեղծ վստահութիւնից: Աստուծաշունչը ուսուցանում է թէ հաւատացեալներ կոչւած են որ իրենց կոչումը եւ ընտրութիւնը հաստատ անեն (Բ. Պետրոս 1:5-7): Ուրեմն ոչ միայն մենք կարող ենք ունենալ մեր փրկութեան վստահութիւնը, այլ մենք կոչւած ենք որ հետապնդել այն՝ քանի որ այն խիստ կարեւոր է մեր սրբագործութեան համար: Այստեղ կարեւոր է նշել թէ երբ վարում ենք վստահութեան հարցի հետ մենք իրականում խօսում ենք մարդկանց չորս դասակարգերի առթիւ: Առաջին, կան նրանք որոնք փրկւած չեն եւ գիտեն որ փրկւած չեն: Երկրորդ, կան նրանք որոնք փրկւած չեն սակայն կարծում են որ փրկւած են: Երրորդ, կան նրանք որոնք փրկւած են եւ գիտեն որ փրկւած են: Եւ չորրորդ, կան նրանք որոնք փրկւած են սակայն վստահ չեն որ փրկւած են:

Կեղծ վստահութիւն – Ուէտսմինստըրը Հաւատոյ Հանգանակը նշում է որ հնարաւոր է անվերածին մարդկանց համար մտածել թէ նրանք փրկւած են, բայց այսպէս մարդիկ «ի գուր խաբում են իրենց կեղծ յոյսերով ու մարմնաւոր ենթադրութիւններով» (18.1): Մենք տեսնում ենք բազմաթիւ օրինակներ Աստուծաշնչում այսպէս մարդկանց մասին, նրանք որոնք համարեցին իրենց որպէս Աստուծոյ ժողովուրդը, Նրա հետ եղած մի ուղիղ (հաշտ) յարաբերութեան մէջ՝ նոյնիսկ Հին Կտակարանի առաջնորդներ, քահանաներ ու մարգարէներ. եւ Նոր Կտակարանում նրանք որոնք կարծում էին որ Քրիստոսի հետեւորդներ էին, Նրա հետ մի մտերիմ յարաբերութեան մէջ՝ կատարած շատ հրաշքներ Նրա անունով. սակայն, իրականում նրանք բոլորը բացայայտեցին որպէս իրենք իրենց խաբողներ, կեղծ յոյսերով ու մարմնաւոր ենթադրութիւններով, որոնց վախճանը կ'լինի կործանում (Միքիա 3:11, Մատթէոս 7:21-23, Յովհաննէս 8:39-41, 44):

Պարագան նոյնն է հենց այսօր, ուր շատեր կարծում են որ Քրիստոնէաներ են սակայն իրականում չեն: Ուրեմն ի՞նչ է այսպէս կեղծ մտածողութեան պատճառը: Հիմնական պատճառը թէ ինչու մարդիկ ունեն փրկութեան մի սխալ վստահութիւն այն է որ նրանք ունեն փրկութեան մի սխալ հասկացողութիւն: Կան սրա քանի կերպեր: Առաջին, կան նրանք որոնք կարծում են որ Քրիստոնէաներ են իրենց ազգային «Քրիստոնէական» մշակոյթի կամ եկեղեցու հետ եղած կապակցութեան ու դրա խորհրդականութեան պատճառով (ինչպէս Հռովմէական Կաթոլիկ կամ Օրթոտոքս եկեղեցիներում): Սակայն, նրանց խիստ մեծամասնութիւնը տգէտ են (անտեղեակ են) թէ Աստուծաշունչը ինչ է սովորեցնում Աստուծոյ, մարդու, մեղքի, Քրիստոսի, եւ փրկութեան մասին: Այնուհետեւ կան նրանք որոնք կարելի է որ դաւանում են հաւատալ Քրիստոսին սակայն աւելի կարեւոր նրանք կարծում են որ Քրիստոնէաներ են շատ այլ բաների համար՝ ինչպէս լինել ծնւած մի հաւատացեալ ընտանիքում եւ եկեղեցի յաճախելով, մկրտւած լինելով, ծառայելով, նիրատուփիւնով, բարի գործեր անելով, կամ նոյնիսկ պարզապէս ապրելով մի բարի կեանք: Իրականում բոլոր այդպէս մարդիկ հաստատում են գործերով արդարացման վարդապետութիւնը, որը հակառակ է միայն հաւատքով արդարացման վարդապետութեան ըստ ուսուցանւած Աստուծաշնչում:

Առաւել, կան նրանք որոնք շատ Բողոքական եկեղեցիներում ստացել են աւետիսի մի մակերեսային ներկայացումը, որոնք պատասխանել են քարոզի վերջումը եղած ապաշխարութեան (խորան գալու) կոչը, քայլել են եկեղեցու առջեւը, բարձրացրել են իրենց ձեռքերը, աղօթել են մեղաւորի աղօթքը, եւ գուցէ նոյնիսկ մկրտւել են, եւ ուստի ասել են որ այս բաների պատճառով նրանք հաւատացեալներ են եւ յաւերժաբար ապահով: Ստանալով այսպէս մի վստահութիւն շատեր ապա հեռացել են եկեղեցուց, վերադարձել են իրենց կեանքերին եւ շարունակել են ինչպէս նախկինում՝ այս բոլորի ընթացքում ենթադրելով որ հաւատացեալներ են (Ղեւտացոց 11:44-45, Ա. Թեսաղոնիկեցիս 4:7, Ա. Պետրոս 1:14-16):

Մի այլ պատճառ թէ ինչու մարդիկ ունեն փրկութեան մի կեղծ վստահութիւն այն չէ որ նրանք չունեն աւետիսի ճիշտ ըմբռնումը, քանի որ նրանք հասկանում են աւետիսը, այլ որովհետեւ նրանք ունեն միայն այդ: Կան շատեր որոնք աւետարանը շատ լաւ են հասկանում, որոնք նոյնիսկ կարելի է ունենան շատ աստուծաշնչային վարդապետութիւնների խորը ըմբռնում, եւ ուստի այս գիտութեան պատճառով նրանք կարծում են որ հաւատացեալներ են, որ փրկւած են, եւ դրանով ունեն փրկութեան վստահութիւն: Բայց այս մի կեղծ վստահութիւն է, եւս մի ինքնախաբէութեան ձեւ, քանի որ մենք տեսել ենք անցեալ դասերում թէ գիտութիւնը, որքան էլ մանրամասն ու ճշգրիտ, բաւարար չի փրկութեան համար: Նոյնիսկ այս գիտութեան հաստատումն բաւարար չի: Մենք չենք փրկուում ունենալով մի ուղիղ հասկացողութիւն թէ ով է Քրիստոսը կամ ինչ է արել Նա, կամ ճշգրիտ ըմբռնելով վերածնութեան, հաւատքի կամ արդարացման վարդապետութիւնները: Փոխարէն, մենք փրկուում ենք երբ մենք վստահում ենք Յիսուս Քրիստոսին որպէս մեր Փրկիչը: Այս պահանջում է միտքը, կամքն, ու նաեւ սիրտը: